

ԵՎՐՈՊԱՅԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՆԵՐՔԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԿՈՄԻՏԵ

**ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱ
ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ՓՈԽԱԴՐՎՈՂ ԲԵՌՆԵՐԻ
ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՀԱՏՍԱՆ ԴՅՈՒՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ**

Ստորագրված է 1952թ. հունվարի 10-ին Ժնևում



ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱ
ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ՓՈԽԱԴՐՎՈՂ ԲԵՌՆԵՐԻ
ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՀԱՏՄԱՆ ԴՅՈՒՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ներքոստորագրյալները,
Պատշաճ կերպով լիազորված,
Հանդիպելով Ժնևում Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի հովանու
ներքո,
Երկաթուղային տրանսպորտով փոխադրվող բեռների սահմանների հատումը
դյուրացնելու նպատակով,
Համաձայնվեցին հետևյալի շուրջ:

ԲԱԺԻՆ I

ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԿԱՅԱՐԱՆՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄՆ Ու ԳՈՐԾՈՆԵՈՒԹՅՈՒՆԸ,
ՈՐՈՆՅՈՒՄ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՒՄ ԵՆ ԵՐԿՈՒ ՍԱՀՄԱՆԱԿԻՑ
ԵՐԿՐՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

Հոդված 1

1. Համապատասխան սահմանակից պետությունների իրավասու մարմինները սահմանը հատող ցանկացած երկաթուղային գծի վրա, որով զգալի ծավալի միջազգային փոխադրումներ են իրականացվում, ըստ համաձայնագրի՝ համատեղ կուսումնասիրեն սահմանին մոտ կայարանի նշանակման հնարավորությունը, որում հնարավոր կլինի արդյունավետ իրականացնել բոլոր բեռների կամ դրանց մի մասի մուտքի և ելքի՝ երկու պետությունների օրենսդրությամբ պահանջվող անհրաժեշտ ստուգումները:
2. Այնտեղ, որտեղ երկու սահմանակից պետություններն իրենց ընդհանուր սահմանի երկայնքով նշանակում են նման կարգի մի քանի կայարան, այդ կայարանների քանակը սահմանի ամեն կողմում, պետք է հնարավորինս հավասար լինի:
3. Այն բոլոր կետերում, որտեղ երկկողմանի երթևեկության ստուգումների համար նման կայարանների հիմնումը անհնար է, Պայմանավորվող կողմերը

համատեղ կուսումնասիրեն սահմանի մի կողմի կայարանում մի ուղղությամբ երթևեկության ստուգման և սահմանի մյուս կողմի կայարանում հակառակ ուղղությամբ երթևեկության ստուգման հարմար միջոցներ ձեռնարկելու հնարավորությունը. այս պայմանն անհրաժեշտության դեպքում պետք է սահմանափակվի որոշակի արագընթաց միջազգային գնացքներով փոխադրվող բեռների համար:

Հոդված 2

1. 1-ին հոդվածի համաձայն նշանակված կայարանում պետք է ստեղծվի գոտի, որում նշանակված կայարանին սահմանակից տարածքի պետության (այսուհետ՝ սահմանակից պետություն) իրավասու վարչակազմի պաշտոնյաները և գործակալներն իրավունք կունենան ստուգել ցանկացած ուղղությամբ սահմանը հատող բեռները:

2. Այդ գոտին, որպես կանոն, ներառում է.

ա) կայարանի որոշակի տարածքը,

բ) ուղևորատար գնացքները և գծի այն հատվածը, որտեղ նրանք կանգ են առնում ստուգումների ամբողջ ժամանակահատվածում,

գ) հարթակի և գծի այն հատվածները, որոնք յուրաքանչյուր դեպքում կարող են համաձայնեցվել շահագրգիռ պետության իրավասու վարչակազմի կողմից,

դ) սահմանակից պետության սահմանի և կայարանի միջև ուղևորատար գնացքները:

Հոդված 3

2-րդ հոդվածի հիման վրա ստեղծված գոտում սահմանակից պետության օրենքների և կանոնների կիրառումը, ինչպես նաև այդ պետության իրավասու վարչակազմի պաշտոնյաների և գործակալների նկատմամբ իրավասությունները, իրավունքներն ու պարտականությունները պետք է կարգավորվեն համապատասխան պետությունների իրավասու վարչակազմերի միջև երկկողմ համաձայնագրերով:

Հոդված 4

1. Շահագրգիռ պետության իրավասու վարչակազմերը հատուկ համաձայնագրերով կսահմանեն, թե ինչ անշարժ գույք է հարկավոր սահմանակից պետության ծառայություններին նշված գոտու տարածքում և ինչ պայմաններ, որոնցով տվյալ պետության երկաթուղային վարչակազմը, որի տարածքում գտնվում է կայարանը, հիշյալ շինության համար կմատակարարի կահույք, լուսավորման, ջեռուցման, մաքրման, հեռախոսային կապի և այլ սարքավորումներ:

2. Սահմանակից պետության ծառայությունների գործունեության համար պահանջվող որևէ սարքավորում պետք է արտահանվի ժամանակավորապես և վերստին ներմուծվի առանց մաքսային հարկերի և վճարումների, պայմանով, որ հայտարարագիրը ճիշտ է լրացվել: Արտահանումը և ներմուծումը արգելող կամ սահմանափակող կանոնները այդ սարքավորումներին չեն վերաբերում:

Հոդված 5

1. 2-րդ հոդվածի հիման վրա ստեղծված գոտում սահմանակից պետության ծառայություններին բաշխված կառույցները կարող են արտաքինից գծանշվել, այդ թվում տվյալ պետության ազգային գույների վահանով:

2. Սահմանակից պետության իրավասու վարչակազմի պաշտոնյաները և գործակալները պետք է կրեն ազգային համազգեստ կամ տարբերակիչ նշան՝ համաձայն այդ երկրի կանոնների:

3. Սահմանակից պետության իրավասու վարչակազմի պաշտոնյաները և գործակալները, որոնք սույն Կոնվենցիայով նախատեսված ստուգումներ անցկացնելու համար հրավիրվում են կայարան, կազատվեն անձնագրային ձևակերպումներից: Նրանց ներկայացրած պաշտոնական փաստաթղթերը կհամարվեն իրենց ազգության, անձի, կոչման և իրենց պարտականությունների բնույթի բավարար ապացույց:

4. 2-րդ և 3-րդ մասերում հիշատակված պաշտոնյաները և գործակալներն իրենց պարտականությունները կատարելիս կօգտվեն այն նույն պաշտպանությունից և աջակցությունից, ինչ տեղակայման կայարանի պետության համապատասխան պաշտոնյաները և գործակալները:

5. 3-րդ հոդվածով նախատեսված սահմանակից պետության պաշտոնյաները և գործակալները, որոնք բնակվում են կայարանի տեղակայման պետությունում, երկկողմ պայմանավորվածության հիման վրա ազատվում են հարկերից և սուրբերից:

6. Երկկողմ պայմանավորվածությունները, որոնց հղում է արվել 3-րդ հոդվածում, պետք է սահմանեն.

(ա) սահմանակից պետության իրավասու վարչակազմի այն պաշտոնյաների և գործակալների առավելագույն թիվը, որոնք լիազորված են 2-րդ հոդվածի համաձայն ստեղծված գոտում ստուգումներ իրականացնել,

(բ) այն պայմանները, որոնց առկայության դեպքում կարող է պահանջվել նրանց վերադարձը, և

(գ) այն պայմանները, որոնց առկայության դեպքում նրանք կարող են նշված գոտում իրենց պարտականությունների կատարման ընթացքում զենք կրել և օգտագործել:

Հոդված 6

1. Մաքսային մարմինները և այլ շահագրգիռ վարչակազմերը կանեն հնարավորը, որպեսզի իրենց երկրների սահմանը հատող բեռների մաքսային և այլ ստուգումների համար պահանջվող ժամանակը հասցվի նվազագույնի, մասնավորապես հետևյալ դեպքերում.

շտապ բեռների,

միջազգային տարանցիկ փոխադրումների,

շուտ փչացող բեռների, խոշոր եղջերավոր անասունների և այլ բեռների, որոնց համար արագ փոխադրումը կարևոր է,

արագընթաց միջազգային գնացքներով առաքված բեռների,

երկաթուղային շարժակազմին բեռնված ծանր բեռների:

2. Մաքսային և այլ ստուգումների առավելագույն ժամանակը կարող է կանոնակարգվել 3-րդ հոդվածում նշված երկկողմ համաձայնությամբ:

3. Սույն հոդվածի առաջին կետի դրույթները կատարելու նպատակով երկաթուղային վարչակազմերը ժամանակին կտեղեկացնեն մուտքի և ելքի

պետությունների իրավասու մարմիններին միջազգային գնացքների հաճախության/պարբերականության, ժամանակացույցի և կազմի մասին:

Հոդված 7

1. Մաքսային գերատեսչությունը և Պայմանավորվող կողմի շահագրգիռ վարչակազմերը համապատասխան երկրի երկաթուղու վարչակազմի հետ պայմանավորվածության համաձայն հատուկ միջոցներ կձեռնարկեն՝ նպատակաուղղված ստուգումներն արագացնելուն, մասնավորապես, եթե դրանք միջազգային տարանցիկ բեռներ են:

2. Շահագրգիռ պետության երկաթուղու վարչակազմի հետ պայմանավորվածության համաձայն, մաքսային գերատեսչությունը և այդ պետության շահագրգիռ վարչակազմերը հնարավորության սահմաններում նշված պետության ներսում գտնվող այն կայարաններում, որտեղ հատկապես շատ է միջազգային երթևեկությունը, կստեղծեն գրասենյակներ բեռների ստուգման և մաքսագերծման համար, լինի դա մեկնելուց առաջ, թե ժամանելուց հետո: Պետության ներսում գտնվող նման կայարանի և ցանկացած ուղղությամբ սահմանային կայարանի կամ երկու պետությունների ներսում գտնվող նման երկու կայարանների միջև նշված բեռները կարող են փոխադրվել սույն հոդվածի առաջին կետում նշված միջազգային տարանցման համակարգով:

3. Հաշվի առնելով սույն բաժնի դրույթների կիրառումը.

(ա) Պայմանավորվող կողմերը սկզբունքորեն կճանաչեն մյուս Պայմանավորվող կողմերի մաքսային մարմինների կնիքը, մաքսային վարչակազմի՝ իր կնիքն ավելացնելու իրավունքը պետք է ճանաչվի մյուսների կողմից.

(բ) Պայմանավորվող կողմերը կընդունեն միջազգային մաքսային հայտարարագրի ստանդարտ ձև, որը կհանդիսանա սույն Կոնվենցիայի հավելվածը.

(գ) միջազգային մաքսային հայտարարագրի ստանդարտ ձևը կտպագրվի երկու լեզուներով՝ ֆրանսերեն և մեկնման վայրի պետության լեզվով, եթե այլ բան նախատեսված չէ, յուրաքանչյուր պետության կրկնօրինակը պետք է կազմվի նույն ձևով.

(դ) բեռն առաքողի հայտարարագիրը պետք է լատինատառ կազմվի և մեկնման վայրի պետության լեզվով կամ ֆրանսերենով. անհրաժեշտության

դեպքում երկաթուղու վարչակազմը պատասխանատու է դրա թարգմանության համար.

(ե) այս կանոնները չեն խոչընդոտում մաքսային և երկաթուղային վարչակազմերին՝ բացառապես իրենց երկրի ներսում երթևեկության պարագայում թույլ տալու այլ լեզվի օգտագործման հնարավորությունը, եթե այդ եղանակն ավելի հարմար է.

4. Միջազգային մաքսային հայտարարագրի ստանդարտ ձևը կարող է սույն Կոնվենցիայի 16-րդ հոդվածում նշված հեշտացված ընթացակարգի համաձայն փոփոխության ենթարկվել:

Հոդված 8

1. Երկաթուղու, մաքսային մարմինների և այլ շահագրգիռ վարչակազմերի աշխատանքային ժամերը պետք է մանրակրկիտ հարմարեցվեն գնացքների ժամանակացույցին և երթևեկության պահանջներին:

2. Սահմանային կայարաններում և այն կայարաններում, որտեղ ստուգումներն իրականացվում են երկու սահմանակից պետությունների կողմից, Պայմանավորվող կողմերը հնարավորության սահմաններում միջոցներ կձեռնարկեն փոստի, հեռագրատան և հեռախոսային կետերի բացման ժամերը համապատասխան մաքսային գրասենյակների աշխատանքային ժամերին հարմարեցնելու համար:

Այն կայարաններում, որտեղ ստուգումներն իրականացվում են միայն մեկ պետության կողմից, մաքսային մարմինները և այլ շահագրգիռ վարչակազմերը կձեռնարկեն 6-րդ հոդվածում նկարագրված միևնույն միջոցները՝ նվազագույնի հասցնելու մաքսային և այլ ստուգումների համար պահանջվող ժամանակը:

Հոդված 9

Բոլոր հիմնական մայրուղիներում Պայմանավորվող կողմերը սահմանակալից պետության սահմանային կայարանների միջև կստեղծեն ուղիղ երկաթուղային հեռախոսային գծի ծառայություն և միջոցներ կձեռնարկեն՝ դյուրացնելու և արագացնելու մասնավոր հեռախոսային կապը: Երկկողմ համաձայնությամբ ուղիղ հեռախոսային կապը շարունակելու իրավունք կարող է տրվել այլ հասարակական ծառայություններին:

Հոդված 10

Մաքսային մարմինները և այլ շահագրգիռ վարչակազմերը, ինչպես նաև երկաթուղին անհրաժեշտ միջոցներ կձեռնարկեն գծի մատույցներում ստուգումները հեշտացնելու համար, եթե այդ միջոցները նախատեսված են սպասելու ժամանակը կրճատելու համար, պայմանով, որ նման ստուգումներն ամբողջությամբ նույնական լինեն և անձնակազմի համար վտանգ չեն առաջացնում:

Հոդված 11

Մաքսային մարմինները և այլ շահագրգիռ վարչակազմերը, ինչպես նաև երկաթուղին անհրաժեշտ միջոցներ կձեռնարկեն արագ փչացող բեռների ստուգմանն առաջնահերթություն տալու համար, մասնավորապես, երբ դրանք հատում են սահմանը միջազգային տարանցիկ ընթացակարգով:

ԲԱԺԻՆ V

ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ԴՐՈՒԹՆԵՐ

Հոդված 12

1. Սույն Կոնվենցիայի ստորագրումից հետո այն բաց է Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի աշխատանքներին մասնակցող պետությունների կողմից միանալու համար:
2. Միանալու, անհրաժեշտության դեպքում նաև վավերացման մասին փաստաթղթերը կհանձնվեն Կոնվենցիայի ավանդապահին՝ Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին, որն այդ մասին կտեղեկացնի սույն հոդվածի առաջին կետում նշված բոլոր պետություններին:

Հոդված 13

1. Սույն Կոնվենցիան կարող է չեղյալ համարվել այդ մասին վեց ամիս առաջ ծանուցվելով Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին, որն այդ մասին կտեղեկացնի մյուս պետություններին: Վեց ամիսը լրանալուց հետո չեղյալ հայտարարելու մասին դիմում տված Պայմանավորվող պետության համար Կոնվենցիան կդադարի ուժի մեջ լինել:

Հոդված 14

1. Սույն Կոնվենցիան ուժի մեջ կմտնի, երբ 12-րդ հոդվածի առաջին կետում նշված պետություններից երեքը դառնան Պայմանավորվող կողմեր:
2. Այն կդադարի, եթե Պայմանավորվող պետությունների քանակը երեքից պակասի:

Հոդված 15

Երկու կամ ավելի Պայմանավորվող կողմերի միջև սույն Կոնվենցիայի մեկնաբանության կամ կիրառման հետ կապված ցանկացած վեճ, որը կողմերը չեն կարող կարգավորել բանակցությունների միջոցով կամ այլ եղանակով, շահագրգիռ Պայմանավորվող կողմերից որևէ մեկի պահանջով կարող է ներկայացվել արբիտրաժային հանձնաժողովի քննարկմանը, որում վեճին մասնակցող յուրաքանչյուր կողմ կնշանակի մեկ անդամ. նախագահը, որն ունի վճռական ձայնի իրավունք, կնշանակվի Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարի կողմից:

Հոդված 16

1. Եթե Պայմանավորվող կողմերից որևէ մեկը ցանկություն հայտնի ձևափոխման ենթարկել սույն Կոնվենցիայի հավելված հանդիսացող միջազգային մաքսային հայտարարագրի ստանդարտ ձևը, ապա նա պետք է իր առաջարկած ուղղումը ներկայացնի Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին, որն այդ մասին կհաղորդի բոլոր ստորագրող կամ միացած պետություններին:
2. Ուղղումն ուժի մեջ կմտնի նախորդ կետում նախատեսված հաղորդումից իննսուն օր հետո, եթե մինչև այդ ժամկետի լրանալը ստորագրող կամ միացած պետությունների առնվազն մեկ երրորդը Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին չհայտնի ուղղումների վերաբերյալ իրենց անհամաձայնության մասին:
3. Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը կարձանագրի հավելվածի ուղղման ուժի մեջ մտնելը և այդ մասին կտեղեկացնի ստորագրող կամ միացած բոլոր պետություններին:

Հոդված 17

1. Սույն Կոնվենցիայի բնօրինակի ավանդապահը Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարն է, որը դրա հաստատված օրինակը կփոխանցի 12-րդ հոդվածի առաջին կետում նշված բոլոր պետություններին:
2. Գլխավոր քարտուղարը սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց հետո լիազորված է գրանցել այն:

Կատարված է հազար ինը հարյուր հիսուներկու թվականի հունվարի տասին, Ժնևում, միակ բնօրինակով, անգլերեն և ֆրանսերեն, ընդ որում երկու տեքստերն էլ հավասարազոր են:

ԲԵԼԳԻԱՅԻ անունից՝

բարոն Ֆ. Դը ԿԵՐՉՈՎԵ
(ենթակա է վավերացման)

ՖՐԱՆՍԻԱՅԻ անունից՝

Մ. ԼՅՈՒՅԵ
(ենթակա է վավերացման)

ԻՏԱԼԻԱՅԻ անունից՝

Ինգ. Ֆեռուցիո ՄԱՐՏԻՆ
(ենթակա է վավերացման)

ԼՅՈՒՔՍԵՄԲՈՒՐԳԻ անունից՝

Ա. ԿԼԵՄԱՆ
(ենթակա է վավերացման)

ՆԻԴԵՐԼԱՆԴՆԵՐԻ անունից՝

Ծ. Լ. Դը ՎՐԻԵՍ
(ենթակա է վավերացման)

ՆՈՐՎԵԳԻԱՅԻ անունից՝

Հ. ՊԱՔՍԱԼ
(ենթակա է վավերացման)

ՇՎԵԴԻԱՅԻ անունից՝

Վ. ՀՈԼԼ

(ենթակա է վավերացման)

ՇՎԵՅՑԱՐԻԱՅԻ անունից՝


ՏԱՊԵՌՆՈ

(ենթակա է վավերացման)

Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ց

Միջազգային երկաթուղային տրանսպորտ

| | |
|---|---|
| 1. Միջազգային մաքսային հայտարարագիր | |
| 2.* Երկաթուղու անվանումը..... Ներկայացված է..... * Ես՝ ներքոստորագրյալս, Լիազորված գործակալը | <div style="border: 1px solid black; padding: 10px; text-align: center;"> <p>Մաքսատուն</p> <p>3.</p> <p>Թիվ.....</p> </div> |
| Հետևի մասում նկարագրված Երկաթուղու, բեռները հանձնում են տարանցման և պարտավորվում են վերահանձնել դրանք օրվա ընացքում.....Մաքսատանը(ամսաթիվ) | |
| 4. Կնիքը դրված և հաստատված է | Վազոն n°..... |
|(ամսաթիվ) | <div style="border: 1px solid black; border-radius: 50%; width: 100px; height: 100px; display: flex; align-items: center; justify-content: center;"> <p>ՏՆՑՄԻՆԻ ԻՄՇՆԱ</p> </div> |
| Մաքսատան աշխատակից | |
| 5. Մենք՝ ներքոստորագրյալներս,..... մաքսատան մաքսային աշխատակիցները, սույնով հավաստում ենք, որ հետևի մասում նշված ապրանքները վերահանձնվել են մեզ իրենց անխախտ կնիքներով:(ամսաթիվ) | |
| 6. Բեռների կառավարում * Տեսնվել է սահմանն անցնելիս..... | |

| | |
|---|---|
| Բեռնված էր(նավի անունը) վրա Պահեստավորված էր..... Մտցվել է տնային օգտագործման համար.....(ամսաթիվ) | |
| 7. Բեռնաթափման ձև թիվ տրվել է համաձայն ստանձնման, որը մտել է |  |
| 8. Նշումներ (տրանսբեռնում, կնիքների վնասում և այլն) | |
| * գիծ քաշեք, եթե դա Ձեզ չի վերաբերում. | |

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏ

| 9. Բեռն ուղարկողի մաքսային հայտարարագիրը | | | | | | | |
|---|------------------------|--|----------------------|---|--|---|----------------|
| 10. Բեռը ստացողի անունը և հասցեն | | | | 11. Բեռների բարձրագույն պետությունը 12. Բեռների ժամանման պետությունը | | | |
| Փաթեթների կամ վազոնների նշանները և համարները 13 | Փաթեթների քանակը 14 | Փաթեթների բնույթ (տուփեր, պարկեր և այլն) 15 | Բեռների բնույթ 16 | Համախառն քաշը 17 | Չուտ քաշը կամ այլ չափիչներ (խորանարդ ծավալ և այլն) 18 | Ուղարկող պետության տարադրամի արժեքը 19 | Նշումներ 20 |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| 21. Բեռը ուղարկողի կողմից տրված այլ մանրամասներ (կայարանը, որում պետք է իրականացվեն ձևակերպումները, բեռների խմբաքանակն ինչպիսի մաքսային կարգով պետք է մտցվի, կցվող փաստաթղթերը և դրանց համարները և այլն | | | | 22. բեռը ուղարկողի..... Անունը և հասցեն.....(վայրը).....(ամսաթիվը) | | | |

23. Խմբաքանակ No.

24. Դրված առաջին մաքսային կնիքի համարը և
բնույթը.....
.....
.....
.....

Ուղարկող կայարանի
ամսաթվի կնիքը